Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ ԹԻՎ 74-Ա, 75-Ն, 76-Ն, 77-Ա, 78-Ն ԵՎ 79-Ա- 82-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 75-Ն որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 76-Ն որոշման 1-ին կետում «հավելվածի» բառը փոխարինել «N 1, N 2, N 3, N 4 հավելվածների» բառերով: Բացի այդ, որոշման մեջ ներառված չէ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջետային ուղերձը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից:

Թիվ 77-Ա որոշման նախաբանում հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրեքնի 17-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Թիվ 78-Ն որոշման նախաբանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասին կատարված հղումը սխալ է:

Թիվ 80-Ա որոշման բովանդակության մեջ անհրաժեշտ է գրառել գույքագրման տարեթիվը, ամիսը և ամսաթիվը:

Թիվ 81-Ա որոշման 2-րդ կետում վարձավճարի չափը թվով և տառերով տարբեր է գրառված: Բացի այդ, 3-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

Որոշումների ներքևի մասում գրառված կողմ ավագանու անդամների թվերը չեն համապատասխանում ստորագրությունների թվերին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
09.02.2021թ.